

ԳԼՈՒԽ Ե

Թումայ ընկողմանեալ էր վառարանին քով, եւ ուշադրութիւն անգամ չըրաւ մտնողաց, որ յարգանօք ողջունեցին. իր երկու զինուորները հոտին կանգնած-էին դռան քով: Կ'աղզուանի աւագերեցը նստած էր վարը փոքրկացած յոյն զօրավարին ներկայութեան: Չաւեն այս վիճակը տեսնելով՝ քահանան հրաւիրեց վառարանին քով անցնիլ նստիլ. եւ նկատելով նորա դանդաղութիւնը՝ օգնեց նաեւ թեւէն բռնելով եւ վեր վարելով, եւ նքն անցաւ քովը նստաւ: Բիւզանդացի յոյնը իւր դիրքին մէջ այս ամեն շարժմունք տեսաւ, եւ լաւ իմացաւ թէ իր արհամարհանաց փոխարէն պատասխանող մը անցաւ իւր առաջ, բայց չիմանալէն եկաւ:

Իսկ Չաւեն, որ բաւական յունարէն կը խոսեր, սկսաւ հանդարտ կերպով ժողովրդեան գանգատները, իւր զինուորներէն եղած անիրաւ պահանջները առաջ դնել, յոյս յայտնելով թէ «իրէն պէս բարձր զօրավար մը այնպիսի անկարգութեանց ներողամիտ չէր կրնար լինիլ»: Չաւենի այս վերջին խօսքերը, ուր երգիծանքը շատ սուր եւ կծու էին, յոյնին բարկութիւնը այն աստիճանի գրգռեցին, որ շակուելով եւ նստելով՝ եւ խիստ ակնարկ ձգելով Չաւենի հարցուց.

– Դու որ զինուորի կը նմանիս կերպարանքովդ, ո՞ւմ քով ծառայած ես մինչեւ հիմա:

– Իմ ըսած խօսքերս կ'երեւայ թէ չի կրցայ հասկցնելի ես աղաչանք մը ըրի, որ հրաման ընէք զինուորներուն անիրաւ պահանջներ չընելու. իսկ դուք ինձ կը հարցնէք թէ ո՞ւմ քով զինուորած եմ. այդ հարցմունքը ինձ զարմանք կ'ուտայ, ուստի ես էլ համարձակութիւն կառնում ձեզ հարցնելու՞թէ ի՞նչ կը նշանակէ այդ հարցմունքը:

– Դու հասարակ շինական՝ կը համարձակիս ինձ՝ հոռոմ իշխանի հարցմունք ընել:

– Ի՞նչ յանցանք կայ այդտեղ, մարդ չգիտցածը միշտ իրաւունք ունի հարցնել: Դուք ինձ կը հարցնէք թէ ո՞ւմ քով ծառայէր եմ, նոյնպէս ես էլ հասարակ շինական համարձակութիւն առի ձեզ հարցնել թէ ի՞նչ մտօք այդ հարցմունքը կ'ընէք. չար միտք էթէ ունենայի կրնայի հարցնել թէ դո՞ւք էիք արաբաց դէմ այդ մեծ յաղթութիւնը կարգադրողը թէ Պրոկոպիոս: